



ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔԱ ԱՐՄԵՆ

5507 ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 31

23 ՅՈՒՆԻՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցականությունը

Իրիգոր Պատուելի Փեթիմալեան

Ախտյեանդ

Եթէ զիսեայի՜...

Թուս Հեղինակի մը

Սրբի Կապ

Սիւլլի Բրիւսովի

Պատասխան Մաթիսի Հարցումին

Պէթովէնի Կեանքէն Դրուագ մը
[Թարգմ.]

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

ՓԱՅԼԱԿ

ԷՏՄՕՆ ՏԱՆԹԷՍ

Օ. ԹԻՄՈՒՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՅԱՆ

1907



NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

177 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1903

1903

1903

NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

177 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1903

1903

1903

1903

1903

NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

177 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1903

1903

1903

1903

NEW YORK PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION
177 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՋՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրաւատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
ալաթիա, Տեօյէ Օրիէնդ Պանթի կից, Սինասոն Խան. (2)

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակուայի ցաւով՝ պայն քաշել կուտայ ճարտար ատամնաբոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակուան, կամ գուռօնի մէջ առնել կուտայ, ա՛յ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լա՛ւ, ճարտար ու արուեստին զաղտնիքներուն գիտակ ատամնաբոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և գո՛հ մնալու մեծ ապահովութեամբ պէտք է զիմել հանրածանօթ ատամնաբոյժ ինչիկ էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահչէ-Գաբու:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ակուայի և լինտի հիւանդութիւնները, փտած ակուաները կը լեցնէ՝ առողջ ակուաներու պէս երկար ատեն դործածուելու պայմանով:

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և զիմացկուն արուեստական ակուաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ Բարձաք-Գաբու, Թիւ 8, Կարօտ հիւանդները. ձրի կը դարմանէ հինգ-շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ:

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի:



Կը գտնուի բոլոր
շեղագործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:


Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամները հրաժարական մատուցած էին. Քաղ. Ժողովը ընդունեց Հոգաբարձութեան հրաժարականը և նոր ընտրութիւն կատարելով, վերակազմեց հետեւեալ անդամներով. Տեառք Յարութիւն Ասլանեան, Սաչիկ Սօրասանճեան, Մարթէն Յակոբեան, Գրիգոր Էվրէնեան, Մագսուտ Շահպաղեան, Նշան Ղուկասեան, Տօքթ. Ս. Սեղբոսեան, Տօքթ. Վ. Թորգոմեան:

— Խառն Ժողովի յառաջիկայ նիստէն վերջը պիտի գումարուի եկեղեցական երգեցողութեանց կանոնաւորման Յանձնաժողովը, որ նկատողութեան պիտի առնէ ամէնէն առաջ եռաձայն պատարագի երգեցողութիւնը և միօրինակութեան մասին կարգադրութիւն մը պիտի ընէ: Յանձնաժողովը կրօն. Ժողովէն վաւերացուած եռաձայն պատարագի երգեցողութիւն մը պատրաստելու նպատակ ունի, որպէս զի այլ և այլ կողմեր այլ և այլ ձևով և օտարոտի եղանակներով պատարագի երգեցողութիւններ մէջտեղ չհանուին: Յանձնաժողովը այս դորձէն զատ ընդհանուր եկեղեցական երգեցողութեանց խնդիրն ալ նկատողութեան պիտի առնէ: Կը խորհուի երգեցողութիւնները և շարականները մաս մաս գրելով, բոլոր եկեղեցիները ցրուել:

— Ս. Էջմիածնի մէջ ասկէ առաջ ձեռնարկուած էր գրաբար Աստուածաշունչի տպագրութեան: Այդ թուականէն վերջը Մայր. Աթոռի կառուածական գործերուն պատճառով տպագրութիւնը ընդհատուեցաւ, որովհետեւ լաւական ծախքի կը կարօտէր: Ս. Հայրապետը և Սինօդը այս անգամ պէտք տեսեր են այս գործին ամբողջացման և 200 ոսկիի գումար մը յատկացուցեր են տպագրութեան շարունակութեանը:

— Ռուսահայ բոլոր Վիճակներուն մէջ տրուած պատկի հրամաններու առթիւ, ձեմարանին անունով առանձին նուէր մը ցտանայու համար Սինօդին որոշումով չրջաբերական մը ղրկուեր է բոլոր հոգեւոր ատեաններուն: Ձեմարանին նիւթական մատակարարութիւնը բաւական դժուարացած ըլլալով, պէտք եղած է այս կերպ կարգադրութիւն մը ընել:

— Մէկ քանի օր առաջ միջադէպ մը տեղի ունեցաւ Ազգ. Հիւանդանոցի վիրաբուժական բաժնին մէջ: Ժամանակէ մը ի վեր, Տօքթ. Իվլիքճեան Էֆ. սկսած էր պահանջումներ ընել թէ ինքն ալ պէտք է վիրաբուժական գործողութիւններ կատարէ: Տօքթ. Զարդարեան Էֆ. կը յայտարարէ թէ՝ այդ գիտողութիւնները պէտք է Հոգաբարձութեան ներկայացնէ: Մէկ քանի օր առաջ դարձեալ դիմելով իր պետին, կ'ըսէ թէ վիրաբուժական գործողութիւն կրող հիւանդները պէտք եղած դարմանք չեն կրեր, որովհետեւ ինք բաւական չէ այս պաշտօնին և չի կրնար ա'յնքան հիւանդներու հասնիլ, հետեւաբար կ'առաջարկէ Տօքթ. Զարդարեանի որ ան ալ մասնակցի վիրադարմանութեան: Վիրաբուժականը կ'ընդունի: Արդ, մէկ քանի օր առաջ, Տօքթ. Զարդարեան իր հիւանդները աչքէ կ'անցընէր, ընկերակցութեամբ Տօքթ. Իվլիքճեանի և օգնականներուն, երբ կ'երթայ մէկու մը քով, որուն փեմիւրը կոտրած, դաճի մէջ առնուած էր, և դաճը քակուած էր 20 օրէ ի վեր: Տօքթ.



Թ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 31

23 ՅՈՒՆԻՍ 1907

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ]

Բ. Մ. Ա. Ս

2.

Արմաշի Դպրեմանքը իր ծրագրովը և նպատակովը միեւնոյն կոչումը ունէր կատարելիք, ինչ նպատակ որ ունեցան Սահակ-Մեսրոպեան դարամիջոցի Դպրեմանքերը: Չենք ըսեր, թէ երկուքն ալ միեւնոյն արժէքը ունեցան գործելու և օգտակար ըլլալու տեսակէտով: Պէտքերը, տրամադրութիւնները, միջավայրը և ուրիշ պարագաներ, տարբերութիւններու ահագին չարք. մը կրնան տալ միեւնոյն նպատակով հիմնուած հաստատութիւններու համար: Այդ նպատակն էր հինին մէջ՝ Հայ Եկեղեցականութիւնը անջատել դիպուածական ընտրութիւններէ և կոչումներէ, փրկել Հայ Եկեղեցին Ասորական և Յունական կաղապարի մէջ ձուլուած ինքնակոչ պաշտօնեաներու կամայականութիւններէն, և մեր կրօնական հաստատութեան ու ժողովուրդին միանգամայն տալ իր կոչումին ու դերին գիտակցութիւնը, և տոհմային մասնայատկութիւններովը օժտուած եկեղեցականութիւն մը: Արմաշի Դպրեմանքին հիմնարկութիւնն ալ միեւնոյն պայմաններուն մէջ տեղի ունեցաւ, փրկելու համար Հայ Եկեղեցականութիւնը կարգ մը կամայականութիւններէ, գռեհ-

կութիւններէ, որոնք կը տեսնուէին փոքրաւորութեան մինչեւ եպիսկոպոսութիւն բարձրացող Հայ Եկեղեցականութեան վրայ:

Արմաշ, որ Նիկոմիդիա-Պրուսայի առաջնորդական միացեալ վիճակով, գրեթէ դար մը Պոլսոյ Աթուին տուաւ քիչ շատ կարող Պատրիարքներ, արդէն կանուխէն իւր ուխտատեղի և մերթ իւր վարժարան ու տպարան՝ իր Յոյսով, համայնքին ուշադրութիւնը հրաւիրած էր իր վրայ: Այդ Պատրիարքները կրցած էին արժեցնել ա՛յն համակրանքը և կրօնաբոյր վերաբերումը՝ զոր ցոյց տուած էր ժողովուրդը դէպի Արմաշը և Արմաշականները: Թէպէտ անոնց ժամանակ՝ մեր ժողովուրդին ընկերական կազմակերպութեան բերումով, էսնաֆի ու Ամիրայի անվերջանալի կոիւնները մէկ կողմէն և միւս կողմէն այդ Պատրիարքներէն ոմանց մեղի ու թոյլ բարոյքը [Աղաւնի և Մաղաքեան] և ուրիշներուն անդրաւեռնական ու աններող անձկամտութիւնը [Մատթէոս ու Դէորդ] բաւական զօրաւոր պատճառներ էին անոնց համբաւին ստուեր բերելու, բայց պէտք է խոստովանիլ, թէ անոնք հակառակ իրենց վերագրուած այդ թերութիւններուն, գոնէ իրենց ժամանակին համար լաւագոյն Պատրիարքներէն եղան: Այդ Արմաշեան Պատրիարքներուն վերջինը եղաւ Աշրգեան իորէն Սրբաղան, որուն ճշմարիտ կուսակրօնի և այն ատեն զարգացած մարդու հանգամանքը իր պատրիարքութեան առաջին օրէն իսկ դիւթեց ժողովուրդին հոգին և Կ. Պոլսոյ հրապարակին վրայ եղաւ տեսակ մը տիպար հայ-կուսակրօն Եկեղեցականութեան: Թր մը, Աբիկ էֆ. Ունձեան, որուն մէջ քեդքի կրօնքի մը խառնուրդը կար, նորընտիր Պատրիարքին հետ իր մտերմական ու կէս պաշտօնական տեսակցութեանը պահուն, իրեն բնայատուկ սովորութեան համաձայն, իր դժգոհանքը կը յայտնէ կարգ մը կուսակրօններու մասին, որոնց ապրած այս կամ այն յոռի ընթացքը նոյնպէս պատճառած էր իրեն և լուրջ դարման մը կը խնդրէ:

—Մինչեւ որ դիպուածական ձեռնադրութիւններէ հրաժարելով, մենք լրջօրէն չպատրաստենք մեր կուսակրօնները, պիտի չկրնաք վերջ մը տալ տեղի ունեցած դժգոհութիւններուն:

—Ուրեմն ձեռնարկեցէք այդ գործին, կ'ըսէ Ունձեան էֆէնտի, ես ձեզի հետ պիտի ըլլամ՝ ձեռնարկին յաջողութեանը համար: [Տես Ծաղիկ 1304 էջ 334—330]:

Այս տեսակցութիւնը տեղի կ'ունենար 1889ի սկիզբները և խօսքը անմիջապէս արդիւնքի կը վերածուի, առաքումովը Օրմանեան Սրբաղանի, որ երկու երեք ամսուան մէջ ամայացած Վանքը Դպրեվանքի մը կը վերածէ, շնորհիւ Պոլսէն եկած նիւթական ու բարոյական պարարտ աջակցութեան:

Անդրանիկ դասարանի աշակերտներէն էինք, այսինքն անոնցմէ, որոնք նոր բացուած Դպրեվանքին սեմը ոտք կը դնէին առաջին ան-

գամ: Ամէն գործ իր սկզբնաւորութեան մէջ, կ'ունենայ իր դժուարութիւնները: Եւ մենք ամբողջ սարի մը սփռասքիֆ դասաւանդութիւններու և Տարեքի նման Գերականութիւններու զաւամած մեթոտին գերին եղանք: Այդ խեղճ ու կրակ մեթոտներու և ուսուցումներու կապանքէն Դպրեւանքը գերծեց Դուրեան Սրբազան, որ մենէ տարի մը վերջը կը ժամանէր, և որ իր ժամանումի օրէն իսկ կ'ըլլար Արմաշի Հոգին: Իր առողջ ուսուցումը, իր պատմական-բանասիրական լուրջ ու խորունկ հմտութիւնը, իր կուսակրօնի և հաւատացեալի ամբիժ ու անկեղծ ներշնչումը, իր պատմական-քննադատական անաչառ սկզբունքը, նոր հորիզոն մը բացին Դպրեւանքին առջեւ և մեզի ներշնչեցին աշխատութեան, գիտակցութեան, նուիրումի, անկեղծութեան և անաչառութեան ոգին, որուն օժտումով միայն կարելի պիտի ըլլար պատրաստել արդի ժամանակներու պահանջներէն ծնած Հայ Եկեղեցականութիւնը: Միշտ հնադուին բնադրոշմով Դպրեւանքի մը բերուած այս գրական-կրթական նոր ու բարերար շարժումը, իր ազդեցութիւնը ունեցաւ նոյն իսկ պաշտօնէութեան վրայ. այնպէս որ նոյն ատենի Դպրեւանքի վերատեսուչը, աշխատող ու դիւրաթեք մարդ, գիտցաւ ինքզինքը տալ նորաստեղծ ուղղութեան, օրէ օր իր անձնական մատենադարանը ձոնացնելով նոր ուսումնասիրութեան նուիրուած հատորներով: Ուղղութիւնը հիմնաւի էր, արդիւնքը որոշ և եթէ համերաշխութիւնը, հանրութեան ի նպաստ բերուելիք համերաշխութիւնը չպակսէր, ապահովաբար Դպրեւանք տարբեր արդիւնքով մը պիտի երևար այսօր: Ուսուցիչներու հանդէպ աշակերտներուն ցոյց տուած համակրանքը միշտ աստիճանաւոր եղած է, և անմիջական հետեւութիւնը բարոյական ա՛յն ազդեցութեան, մտաւոր ա՛յն կախարհանքին և հոգեկան ա՛յն բարձրութեան, զոր աշակերտը, առանց կուսակցական նեղմտութեան, բովանդակ անկեղծութիւնով մը կը անանէ այս կամ այն ուսուցիչին վրայ: Դժբախտութիւնը կը սկսի հոն, ուր այդ անմեղ զգացումը կը շահագործուի, տանիլ հասցնելու համար մինչև ա՛յն ստորին կուսակցականութիւնը, որ հոգիները կը թռնաւորէ, վարկաբեկ կ'ընէ հաստատութիւնները, յուսաւրիպումներ կուտայ հանրութեան և նպատակին վեհութիւնը կը զոհէ անհատական մեծամտութիւններու: Ու այդպէս ալ եղաւ: Հետզհետէ ու ինքնաբերաբար ձեւացան Օրմանեանական — Դուրեանական հերձուածներ՝ աշակերտներու չրջանակներուն մէջ. համակրութիւնները աններող դարձան. ոմանց անձկամտութիւնը կայծ մը աւելի կաթեցուց կուսակցութեան այդ մոլորումին մէջ և անկէ ետքը արմատացաւ հոգի մը, որ հակառակ տուրեւոյթ խաղաղութեան մը կեղեւին, մնաց ու մեծցաւ, ոմանց կողմէն շահագործուելով: Անիկա այսօր ալ գոյութիւն ունի, և թորգոմ Վարդապետի դէմ ոմանց հանած հակակիր վարմունքը արդիւնքն է այդ կուսակցականութեան, և նպատակ ունի յաջողցնել ծրագիր մը, որ արդէն

կազմուած էր Թորգոմ Վարդապետի ընտրութեան իսկ պահուն, և որուն գործադրութեանը հակառակեցաւ բուն իսկ հանգուցեալ Ունճեան էֆէնտի, անոր մրցակիցին վարմունքէն զղուած^[1]։ Անցողաբար ըսենք, թէ քանի որ այսօր այդ հին ծրագիրին գործադրութեան հակառակող մը չկայ մէջտեղը, կրօն վերին հեղինակութեան չարաչար գործածումով մը գիրքին պիտի ըլլայ վերաւորել Թորգոմ Վարդապետի նման պարտաճանաչ և արժանաւոր փոխ-վանահօր մը արժանապատուութիւնը, և զինքը զոհել կուսակցական կիրքին ու քմահաճոյքին, որ ոմանց միակ սկզբունքը կազմած է, յանուն կուսակցական ոգիին զոր յաջողապէս հովանաւորած ու շահագործած են։

Յօդուածի մը այս ամփոփ դիժերէն դուրս պիտի թողուի ա'յն կարգ

[1] Մեր ակնարկած այս պարագային ևս անմիկ եւ չի կ'ակնարկէ Մանգումէ, իր առ տղերով։

Վերեւայ քե Թորգոմ Վարդապետի շրջահայեաց ընթացքը նախանձր գրգռած երանոր մեղուաջան գործունեութիւնը դիտող իր կարգակիցներէն ոմանց, որոնք հիմա առանց որ եւ բաւաւոր պատճառի ևս առանց որ եւ իրաւօր կամ հիմի, պատշաճութեան կը ստեղծեն երիտասարդ վերաստույր վիտեցեցելու, որպէս զի իրենց ստպարեզ բացուի, քանի որ ամեն ստպարեզ գոցուած է ալ այնպիսիներուն առջեւ, որոնք կարճ պաշտօնավարութեան մը մեջ անգամ ցոյց տուին ամեն ապիկարութիւն, հոգիի աղտոտութիւն եւ չարաշահութիւն։ Յաւալի է առ շիսակը։ Թորգոմ Վրդ.ի պէս խոհական մարդ մը, Դպրեվանքէն հեռացնել եւ անոր տեղ ընդհանուրին հակադրութեանը արժանացած սնապարծ, փառամոլ, արծարապաշտ մէկը կարգելը արդեօք ի՞նչ մեծ քայլաշարք առաջ պիտի լերէ Դպրեվանքի նիւթական եւ բարոյական շէնքին մէջ։ Արդեօք ասանկ կարգադրութիւն մը հիշանկ ոչխար մը առողջ գայլին հետ փոխել չընեն։ Այդ մարդիկը որոնք Դպրեվանքին դէպք իրենց ձեռքը անցընել կ'ուզեն, պէտք է յաւեհ իրենց միտքէն հանեն այդ փառասիրութիւնը։ Պատշաճութեանը շատ շատ կը նանչնայ իրենց անցեալ գործունեութիւնն ու նկարագիրը։ Եկեղեցին դեռ չկայ իր օճիկը բոքափել նորարոյս, անարժան վարդապետներէն ոմանց լուծեն եւ հիմա արդեօք կարելի՞ քան է որ նորիս պատշաճեցնու ձեռնարկէ, բոլորովին փառամոլ եւ անձնապաշտ ձգտումներ ունեցող Վրդ.ի մը յանձնելով դպրոցին վարչութիւնը։ Երբ Թորգոմ Վրդ. անբաւական կուգայ Դպրեվանք վարելու, աւելի շատ է վերջնականապէս փակել զայն, փոխանակ քաց պահելով՝ տարուէ տարի մեծաքանակ դրամ ապաւելու եւ եկեղեցիին համար վարդապետական տիկն հագած անարժաններ պատշաճեցնու։ Ս. Պատրիարքը, որ կը գործողայ Դպրեվանքին վրայ եւ անոր յատկանշականը կը ցանկայ ամենեւեմ աւելի, շատ քանական է որ պոտաբոլոններու տիկն փառասիրութիւնները չախլախի, առիթ չտալով անոնց որ դուրս ելլեն իրենց քաղաքի խոցէն, ու արդեւ անարժեք է իրենց գոյութիւնը եւ մի միայն գոյութիւնը զգացում մը գոհացնելու արդարացումը ունի։ Զարմանալի քան... Դպրեվանքի վերաստույրութիւնը ետազոյնները երկու երեք տարի առաջ անմեղ երջանիկ մարդը տիկն համարէին ինքզինքնին, երբ մէկը հաճէր քաղաքէն դուրս ելլելու կամ եկեղեցիի մը քաղաքայինը տարուէ իրենց, այնչափ ընկճուած, կոտորած էին, ամեն կողմէ պախարակուած իրենց արարներով ու չարաշահութիւններով։ Ի՞նչ շատ այս արագորոշութիւնը։

[Մանգումէ, քիւ 1813]

մը կրօնական ցաւալի դէպքերը, որոնք այդ կուսակցութեան երեսէն ծնունդ առին Դպրեւանքի խաղաղ Մենաստանին ծոցը, և զանոնք կը վերապահեմ Դպրեւանքի պատմութեան էջերուն: Միայն սա ըսենք, թէ եթէ երբեք ես ուրիշներէն նկատուեցայ երկու Վանահայրերէն սա դէմքին սիրող, Բարգէն վարդապետ ալ նկատուեցաւ ան դէմքին սիրող: Եւս կրօն կուսակցութիւնը մեր դասարանին մէջ չամիսփութեցաւ տարափոխիկ հիւանդութեան մը պէս տնիկա ծաւալեցաւ բոլոր դասարանները, ուր հազիւ թէ կարելի պիտի ըլլար քանի մը չեզոքներ գտնել, կամ անխոհականներ, որոնց համար ուղղութիւնը միշտ ուղղութիւն մըն էր, առանց լաւի կամ վատի խտրութեան: Եւ այնպէս պատահեցաւ որ, Բարգէն վարդապետ և ես միայն նուիրուեցանք հրապարակագրութեան, և համարձակութիւնը ունեցանք մեր կրօնական անկաշկանդ համոզումները յայտնելու մեր Եկեղեցիին շուրջը, ինքը Բիզանդիոնը ընտրելով իբր օրկան և ես Արեւելքը: Եւ Բիզանդիոն անպայման կերպով բարեկամը մնաց Բարգէն վարդապետի, հիւրընկալեց անոր յօդուածները, մինչև ա՛յն օրը, երբ հաշուական միջադէպի մը հետեւանքով Բիզանդիոն զադրեցուց իր համակրութիւնը վարդապետին դէմ: Անցեալէն այսչափ ինչ քրքրելու հարկը զգացինք, պզտիկ շեղում մը ընելով մեր նիւթէն, որովհետև այս տեղեկութիւնները իբր հիմ պիտի ծառայեն, լուսաբանելու համար յետոյ կարգ մը յարձակումներ, որոնք իմ անձս ու համոզումս ներս նշանակէտ ընտրեցին, մասնաւոր թշնամանքի մը և մասնաւոր վրիժառութեան մը թաքուն մտածումով:

Հիմա կ'անցնինք մեր նիւթին շարունակութեան:

Ալ անցած էին այն օրերը, երբ Դպրեւանքի անդրանիկ դասարանը բաւական խոշոր հոգեխօսական *crise* մը կ'անցընէր, կուսակրօնի և ամուսնացեալ կղերի միջև ընտրութիւն մը կատարելու իր անդրանիկ փորձին մէջ, երբ Օրմանեան Սրբազան ամբողջ անդրանիկ խումբը դէպի կուսակրօնութեան ուխտը կը հրաւիրէր, պերճանքի տղայական տեսական մը պարզելով անոնց առջև. անցած էին նաև այն վայրկեանները, ուր ես՝ մեկուսացած ու անջատուած՝ սարկաւազութեան ուխտի պահուն՝ յարուցուած այդ *crise*էն, առանձինն իմ ուխտագիրս կը ներկայացնէի Օրմանեան Սրբազանի, բացատրելով բուն իսկ իմ յանձնառութեանս նպատակը, որդեգրած սկզբունքս և այդ կոչումը ինծի սիրցնող խորունկ համոզումը, որ յարաբերութիւն չունէր բնաւ ո՛չ Սրբազանին տեսլականը եղող իւղոտ պատառին, և ո՛չ ալ այն պերճանքին հետ, որոնք կ'երեւայ թէ մինչև այն ատենի կուսակրօնութիւնը հրապուրող խայծը և միակ սկզբունքը եղած էին, և մենք՝ անդրանիկ եօթներս, մեր ձեռնադրութեան յազումներուն, տրոփումներուն, ցոլքերուն և ժխորին աղօտ տպաւորութիւնը հազիւ կը զգայինք մեր քառասունքի նախօրերուն:

Եկեղեցին հիմա ընդգրկած էր մեզ ամբողջովին և մենք մեր քա-

ռասուլներն օրերուն մանասանդ՝ լուսմիտի մեր խորհողութեան այս կոյս վայրկեաններուն, որոնց խաղաղութիւնը հազիւ ծիծեռնը կը խզէր, իր սուր ձիւով, կը դիտէինք կրօնքի ապագան, որ երէկի անցեալին զաւակը ըլլալով մէկտեղ՝ անոր հետ հանգիստութեան հազիւ քանի մը գիծեր պիտի բերէր իր գէմքին վրայ ու հիմնովին պիտի տարբերէր երէկի անցեալէն, դարեր առաջ գոյութիւն ունեցող անցեալին հարազատ երկունքը ըլլալը ապացուցանելու համար: Այդ սրբավայրին մէջ, որ մեր հոգիին խորը և մեր շուրջը կ'ապրէր, ա'լ դադրած էին նախասիրութիւնները, ցաւերը, տրտունջները, և մէկ նախասիրութիւն, ապագայի կրօնական գործունէութեան նախասիրութիւնը կը խօսէր մեզի: Այդ խաղաղ ու միսթիք միջավայրը, սքանչելի chambre noire-ն էր ա'յն լուսատիպ գործիքին, և իբր *objectif* ծառայող պատուհաններէն ցոլացող ժողովրդային մտածումի, կրօնի մասին սպասումի, ակնկալութեան, դատումի և վերաբերումի ճառագայթները այնքան *net* կուգային ուրուած գծով այդ հսկայ խաւարասնեակին ապակիին վրայ, ցոյց տալով մեզի այն հակասութիւնները, որոնք վարը գիրար կը խաչատէին ամբոխի խաժամութիւն մէջ, ուր մենք պիտի նետուէինք: Կրօնական կեանքի ապագային այդ ստուգութեան, այդ դատողութեան տակ, օրէ օր գիրի կ'առնէի տպաւորութիւններս Նորլնծայի մը Բառասունիք վերնագրին տակ: Այդ գիրի առնուած տպաւորութիւններէս օրական էջ մը պիտի մէջ բերեմ հոս, բառ առ բառ օրինակուած, մի անգամ ընդ միշտ ցոյց տալու համար, թէ իբր զմուտութիւններու անձանոթներ չենք փարած պաշտօնին և ա'յն ակզումներն, զոր կ'ուզենք յանուն մեր սիրած եկեղեցիին ու ժողովուրդին արժեցնել, թէ իսկ ըլլայ մեր կեանքին գինով:

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄՍ. ՍԻՍԻ ՇՈՒՐՁԸ

Արեւելէն հաճոյքով կ'արտատպենք Մասիսի նուիրուած հետեւեալ տողերը, որոնցմով Խմբագրութիւնը բարձր համակրութեամբ մը կը գնահատէ Մասիսի ուղղութիւնը և գրական արժէքը. —

«Մասիս» Գրական Հանդեսին իմբագրութիւնը հետզհետէ նորանոր ջանքեր կ'ընէ քերքը շահեկան դարձնելու համար: Դրանական զոհողութիւններ յանձն առնելով՝ Ենովք Արմէն կը հիւրընկալէ իր Շաքաքսերքին մեջ յայտնի գրագէտներու յօդուածներ և այսպէսով անպայման կերպով մեր առաջին գրական շաքաքսերքը կը դառնայ, զիչով անցնելով Իզմիրի «Մամուլ»-ը, որ հետզհետէ գաւառաքերքի կերպարան կ'առնէ: «Մասիս»-ին մանաւանդ շնորհիւ միացեալ քիւերը (Թ. 28—29) շատ ճիշտ են: Թերքի մը կրած քարեփոխութիւնը հանրութեան մեջ հետզհետէ մոտ կը գտնուի: Միւս կողմէն հանրութիւնը պէտք չի անսարքեր մնայ գրական յաջող և օգտակար ձեռնարկի մը հանդէպ, այլ գործնականապէս պէտք է խաչալէր հանդիսանայ անոր, փոխանակ անկարելի որչաքանութիւնով շնորհիւ հրատարակութիւններ խրատուելու և այսպէսով գրական ճաշակի անկման ուղղակի նպաստելու:

«Արեւելք» [Թիւ 6517]

ԳՐԻԳՈՐ ՊԱՏՈՒԵԼԻ ՓԷՇՏԻՍԱԼՃԵԱՆ

—+3300000—

[ԼԵՍԱՆՔԸ ԵՒ ԴՈՐԾԸ]

Ե.

Այս բարեկամական յարաբերութիւնը կը խանգարի. շատեր կը սկսին հաշտ աչքով չնայիլ անոնց վրայ՝ որոնք կը յաճախէին Միսիոնարներուն քով: Մեր նպատակէն դուրս է յիշել հոս ցրտութեան և յարաբերութեան խանգարման պատճառները, ոչ ալ նպատակ ունինք վերջնելութեան խանգարման ատժիւլէ ալ թուականներուն կրօնական թիւրիմացութեան, անխոհմտութեան առաջ բերած տեսարանները: Շատ բնական էր որ Փէշտիմալճեանի աշակերտները իրենց կրօնական համոզումներով և նորոգուած կեանքով առարկայ ըլլային կասկածի և հարցաքննութեանց: Տ. Գէորգ Քահանայ Արծրունի, Յովհաննէս Տ. Սատուկեան, Ֆիդիգա Պօղոս, ուրիշ շատերու հետ պատիժներ կը կրէին: Հռոմէական կղերին դրգուումով՝ Ոսկերիչ Մելքիսեդեկ աղա, Գում-Գափուի Ուսումնարանին Հոգաբարձութեան աղղեցիկ անդամներէն մէկը, Ուսումնարանին մեծ սրահին ճակատը գտնուող սենեակին մէջ Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեանի և Վ. Սարգիս վարժապետ Յովհաննէսեանի ներկայութեան՝ կը սկսի հարցաքննել Յովհաննէս Տ. Սահակեանը և Սինքերիմ Տ. Մինասեանը^[1] իրենց կրօնական գաղափարներուն մէջ. այս տեղ Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան ա՛յնքան ազդուութեամբ և հմտութեամբ կը պաշտպանէ իր աշակերտները և անոնց գաղափարները որ՝ պէտք կ'ըլլայ զանոնք իրր անմեղ արձակել^[2]: Փէշտիմալճեան բարեկամն էր Միսիոնարներուն՝ Տօքթ. Կուտէլի և Տօքթ. Տուայթի, որոնց հետ սերտ յարաբերութիւն ունեցած է մինչեւ իր մահը: Անարքայն, Ամերիկացի հեղինակ մը, Փէշտիմալճեանը կ'անուանէ Հայ Երազմոս, որ քաջութիւնը՝ չունեցաւ Աւետարանականներուն շարժումին միանալու^[3]:

Կը խոստովանիմ որ Փէշտիմալճեան Պատուելիին գործերուն մէջ յաջողած չեմ գտնել բան մը որ իրաւունք տար մէկու մը զայն իբր երկչոտ նշաւակելու: Ընդհակառակը ինքը կը ներկայանայ մեզի իբր մէկը՝ որ արիութիւնը ունի իր համոզումը հրապարակաւ յայտնելու, նոյն իսկ հակակարծիք եղողներուն ներկայութեանը: «Յայսմաւուրք»ի սրբագրութեան առթիւ կարգ մը վկայաբանութիւններ որոնք ընդուն-

[1] Ամերիկայի մէջ բժշկական վկայական առնող առաջին Հայը (1844).

[2] «Ծագումն Բողոքականութեան ի Հայս» [Բիւրակն]:

[3] Anderson's Oriental Churches [P. 92]

ուած էին և սիրուած ամէն կողմ, ինքը չէ վարանած կոչել «անստոյգ և անօգուտ զրոյց»ներ: Երկչոտի մը ընթացքը չէ աս: Դարձեալ՝ երկչոտ մը պիտի չուզէր, պիտի չհաւանէր յայտաւել «Ո՛վ հրաշալիքին երեք տունները: Հայ-Հռոմէականներու հետ կրօնական վէճերուն առթիւ իր մէկ գրութեան մէջ չէ վարանած Քաղկեդոնի Ժողովին և Լեւոնի Տումարին մասին հրապարակել այն տեսակ գաղափարներ՝ որոնք բոլորովին հակառակ էին Հայ Եկեղեցիին դարերու մէջ ընդունած, փայփայած ըմբռնումին. երկչոտը այդպէս չէր վարուեր: Դարձեալ՝ Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան իր աշխատակցութիւնը շնորհած է հայերէն լեզուի թարգմանելու և արդեամբ Ակնցի Անաստաս աղայի (հաւանօրէն Հայ-Հռոմ) ասպագրելու (1831) Յունական Մաշտոցը. երկչոտ մը տարբեր կերպով պիտի վարուէր, վախճալով որ գուցէ իրեն դէմ հակակրօնութիւն յարուցանէ: Վերջապէս ինքը չէ՞ր որ վայրկեան մը իսկ չէ վարանած պաշտպանելու իր աշակերտները որոնք ամբաստանուած էին իւր հերձուածող՝ Միսիոնարներուն յարերով: Հետեւցնենք ուրեմն թէ՛ եթէ Գրիգոր Պատուելի չէ միացած Միսիոնարներուն յարողներուն, պատճառը իր երկչոտութեան վերագրելու չենք: Ուրիշ պատճառ մը ըլլալու է:

Ժամանակին ծերունազարդ անձերէն մէկը իր աշխատասիրութեանը մէջ կ'աւանդէ թէ՛ Գրիգոր Պատուելին առաջին անգամ երբ կը լսէ որ իր աշակերտներէն ոմանք Միսիոնարներուն յարած են, կը վրդովի, բայց յետոյ կը հանդարտի, խմանալով որ իրմէ սորված սկզբունքին համաձայն կը շարժին անոնք: Այս խօսքերը թերեւս կարենան քիչ մը լոյս տալ մեզի Գրիգոր Պատուելիին ուղղութեանը մասին այս Աւետարանականներու կրօնական շարժումին մէջ: Փէշտիմալճեան Պատուելի ո՛ր և է անպատեհութիւն չէ տեսած իր աշակերտներուն՝ Միսիոնարներուն յարելուն մէջ: Ինքն իսկ անոնց բարեկամը մնացած է մինչեւ իր մահը (1837): Ի՞նչ էր ուրեմն իր ակզբունքը որուն դեռ կը հետեւէին իր սաները Միսիոնարներուն հետ սերտ յարաբերութիւն մշակելով մէկտեղ: Թէ՛ առաջին Միսիոնարները^[1] և թէ՛ անոնց առաջին յարողները զանազան առիթներով յայտարարած են թէ՛ նպատակ ունեցած չեն կրօն. անջատու մ առաջ բերելու: Զանազան նկատումներ միայն ստիպած են զիրենք ուրոյն եկեղեցի կազմելու: Գրիգոր Պատուելի չէ վրդոված թէ՛ Միսիոնարներու և թէ՛ իր աշակերտներէն ոմանց հոգեւոր գործունէութիւնէն, որովհետեւ չէ տեսած ո՛ր և է ջանք, անոնցմէ կատարուած, ուրոյն եկեղեցի կազմելու և կը յիշուի անշուշտ թէ՛ առաջին Հայ Աւետարանականներու կազմակերպութիւնը տեղի ունեցած է Փէշտիմալճեան Պատուելիին մահէն ինը տարի հոգը (1846): Կը սխալի՞նք արդեօք,

[1] Տես Բիւրակն, առաջին Աւետարանականներու Յայտարարութիւնը:

երբ ըսենք թէ՝ Փէշտիմալճեանի սկզբունքն էր առանց անջատելու Հայ Եկեղեցիին ծոցէն՝ գործել հոն իր առաջադրած կրօնական նպատակը իրականացնելու համար:

Թերեւս, աւա՛ղ, 'Իրիգոր Պատուելի չկրցաւ իր վերջի տարիներուն մէջ մեծ կորուով մասնակցիլ իր ժամանակի կրօնական վերանորոգիչ շարժումին: Պատճառը յայտնի է. 1834էն ետքը, երբ Ընծայարանը կը խանգարուի, անոր առատաձեռն մեկենասին՝ Յարութիւն Ամիրա Պէշճեանի՝ դառնադէտ մահով, կը կորսնցնէ իր մարմնական առողջութիւնը: Ճիշդ այս պատճառով շատ անգամ կը բացակայի Ուսումնարանէն՝ որուն փարած էր հոգեւին: Ուստի մեծ իրաւունքով կրնանք վկայել իրեն համար «Հոգին յօժար էր, բայց մարմինը՝ տկար»: 1837ին դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու իր մանչ և աղջիկ զաւակները: Ինքն ալ միեւնոյն տարիին մէջ կը կնքէ իր արդիւնաշատ կեանքը (1837, դեկտ. 24): Գրիգոր Պատուելիին մահով չի դադրիր իր կատարած գործը: Աշակերտները՝ որոնք բաղմամբ իւր էին, կը շարունակեն զայն: Փէշտիմալճեան կը վերածնի իր աշակերտներուն մէջ: Առաջ բերենք իր աշակերտներէն մէկ քանին, պարզապէս ցոյց տալու համար թէ՝ որչա՛փ մեծ ազդեցութիւն ունեցած է ան մեր կրօնական, կրթական, ընկերական և բարոյական կեանքին վրայ.

ԳՐԻԳՈՐ ՔԵՐԷՍՏԵՃԵԱՆ՝ որ յետոյ Պատրիարք և Կաթողիկոս ալ կ'ըլլայ. ան կ'ուզէր իր ուսուցիչին հոգեւոր և ուսեալ կղերներ հասցնելու գաղափարը, աւելի ընդարձակ աստիճանի վրայ, իրականացնել, Գէորգեան ձեմարանը հիմնելով:

ՅԻԶՐԻԱ ՊՕՂՈՍ, բնագէտ և փիլիսոփայ:

ԽԱՉՍՏՈՒՐ ՊՈՒԷՏ ՄԻՍԱԲԵԱՆ, քաջ հայկաբան և բանասէր:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՕՐԱՅԵԱՆ, առաջին անձը որ մեր թերթերուն մէջ գրած է մանկավարժական յօդուածներ:

ԹԱԴԷՈՍ ՀԻԻՆԲԵԱՐՊԷՅԵՆՏԵԱՆ, յետոյ Տ. Յովհաննէս քահանայ, հայկաբան և բանասէր:

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՆԵԱՆ, յետոյ Վարդան փաշայ, կարող և ազդեցիկ հրապարակագիր:

ԳՐԻԳՈՐ ԱՃԷՄԵԱՆ, յետոյ Աւագերէց քահանայ Բերայի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ, ասոր եղբայրը:

ԳԱՂՈՒՍ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ:

ՅՈՎՍԷՓ ՄԱԼԷՉԵԱՆ, որ յետոյ հայկաբանութեան ուսուցիչ կ'ըլլայ Տոքթ. Համլինի դպրոցին մէջ:

ՄԱՐՈՒԳԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՊՕՂՈՍԵԱՆ: Զանց կ'ընենք յիշել ուրիշ բաղմամբ աշակերտներ, ինչպէս և անոնք որոնց ակնարկած եմ անգամ մը:

Խօսքս կնքելէ առաջ կը փափաքիմ որ լաւ միտք պահուի սա իրո-

դուժիւնը թէ՛ Գրիգոր Պատուելի փէշտիմալճեան ճշմարտասէր և խու-
ղարկու միտք մըն էր: Իր նախորդներուն կոխած արահետէն չէ ընթա-
ցած ան. քաջ հայկաբան էր, բայց ըմբռնած՝ աշխարհաբարին կարեւո-
րութիւնը և ինք եղած է առաջին անձը ա՛յնքան կոկիկ լեզուով աշ-
խարհաբար գրող: Իբր ուսուցիչ արժանի է ուսանողութեան բարե-
րար անուանակոչութեան իր ի գործ դրած և ջատագոված դիւրուսոյց
մէթոտներուն համար: Քաջ կրօնագէտ էր, բայց ունէր իր ինքնայա-
տուկ համոզումները. իբր բարոյագէտ և բարոյասէր ուղած է մեր
կեանքը բարեկարգել լաւագոյնին ներշնչումով: Ահա՛ Գրիգոր Պատ.
Պատուելի փէշտիմալճեան իր քառեակ և օգտակար դերին մէջ: Երախ-
տագիտութեամբ յիշենք իր անունը և թո՛ղ իր յիշատակը խանդավա-
ռէ մեզ բարիին և ճշմարիտին սիրով:

[Վ. Ե. Բ. Զ.]

ՄԻՆԱՍ ՏԱԼԵԱՆ

ԱՒՈՅԵԱՆԴ

Ձէ՛, ալ պէտք է որ ես խոստովանիմ
Թէ՛ քեզի շա՛ս մօտ, բայց քեզմէ՛ շարքեր
Կի՛ն մը կը սիրեմ, անճճ, մեներ՛իմ,
Եւ որուն քերեւս դեռ չես հանդիպեր:

Վաշիկեաններ ունիմ, ուր, ինչո՛ւ պահեմ,
Քեզմէ՛ տուելի կը սիրեմ ես գայն,
Իրեն անձնասուր կ'ըլլամ ժպտողմ,
Իր շնորհներուն ա՛յնքան երկնագուն:

Իրաւու պիտի շա՛ս նմանէիք,
Երէ՛ դուն անոր կեանքն ունենայիր,
Անօգտափելի, բայց միտք հպանցիկ,
Բան մը որ մեր հետ երբեք չմեռնիր:

Մի՛ վիրաւորուիր, ջանա՛ հասկնալ
Ինչ՛ որ կը գրեմ այս ասուր քեզի,
Միտք չունիմ օրհորդ ցաւցրեկու ա՛լ.
Բայց, է՛հ, ի՛նչ օգուտ, մէկ մը սիրեցի ...:

Յաւիտեանական սիրուիկն է ան,
Որ գիտ կը կարքէ, կը հրաւիրէ,
Պուն՛ բարեկամաւիտ, ու ան ուրուական,
Յեկուկ ալ ձուլուած շողէ, կրեւէ:

Ջիւրաւ կը հանչնամ, չսեւած բնաւ.
Իմ ծառաւախիւմ, անկուտ շրթանքիս՝
Ան անմահութեան համբոյրը տուաւ,
Ու դուն Պրախիսին պատահեմք, հո՛գիս:

Ի՞նչ, անուշեցա՞ր. — միամիտ ես դո՛ւն.
Այդ պաշտած կիներս, մի՛ վախճաւ Ինճի,
Հակառակ այնքան զիւրիչ բլաւուն,
Իրականապէս մարմին մը չունի,

Եւ իր անունն է Բանաստեղծութիւն:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՍԵԱՆ

ԵԹԷ ԳԻՏՆԱՅԻՒ...

...Հանրային պարտեզի մը նստարանին վրայ, ծառերու շուքին տակ նստած էի: Հովը կատաղօրէն կը շարժէր գլխուս վրայ սեւ և ջրաթաթախ ճիւղերը, և խլելով վերջին տերեւները, կը քշէր կը տանէր լերան ստորոտը, դէպի խոշոր և պղտոր գետը. ալիքները երկինք կը բարձրացնէին խոնաւ ցուրտի մը շունչը: Գետէն անդին, չորցած խոտերու դեղին թաւիչին մէջ պզտիկ լիճ մը կը փայլէր, որ աշնանային ազօտ երկինքը կը ցոլացնէր տրամօրէն և ուր լուսնին տոգոյն բոլորակը կը լուծուէր: Երկար ատենէ ի վեր, հեռաւոր անտառի մը գորշ որմին ետեւը իջած արեւը, թանձրախիտ մութ կապոյտ ամպերուն մէջէն ինկող իր վերջալուսային ծիրանեգոյն երիզով, կրակէ հոսանքի մը կը նմանէր, լերան մը անցքերուն մէջ:

— Մտի՛կ ըրէք, ըսաւ փափուկ ձայն մը քովէս:

Նոխ դարձայ: Նստարանին մօտիկ ոտքի վրայ գէշ հագուած բարձրահասակ երիտասարդ մը կեցած էր: Ծառերուն սօսաւիւնը անոր ոտնաձայներուն շշուկը խափանած էր. անոր մօտենալը չէի լսած:

— Հաց գնելու համար ոլորմութիւն մը ըրէք ինծի, խնդրեց, ձայնը ցածցնելով:

Գլուխը ծռեց, ընկրկեցաւ, բայց գլխարկը չհանեց: Ատոր հաւնեցայ: Առանց աւելի բան մը ըսելու ձեռքս դրպանա խոթեցի:

Գլուխը հպարտօրէն բարձրացնելով, կանխեց զիս շուտ մը.

— Պզտիկ բան մը... Զիս մուրիկի մը տեղ պիտի գնէք: Ո՛չ. պարզապէս անգործ մէկն եմ... չափ անօթի եմ, կը հաւատաք ըսածիս, չէ՞...:

— Այո՛, ըսի:

Դէմքին վրայ ցցուած մասեր ունէր: Խոշոր անուշ մոխրագոյն անջքեր կ'ընկղմէին խորունկ կերպով բարձր ճակատին տակը:

— Շնորհակալութիւն, պատասխանեց տմարդօրէն, ցուրտէն և ամօթէն դողդացող ձեռքովը առնելով դրամը: Շնորհակալութիւն... հիմալ պիտի երթամ ճաշելու...

Տեղէս ելլելով՝ ընկերացայ անոր: Այդ մարդուն վրայ բան մը կար որ զիս իրեն կը քաշէր և հետաքրքրութիւնս կը գրգռէր: Հարցուցի անոր.

— Զե՛մ կրնար քեզի աւելի օգտակար ըլլալ:

— Ինծի գործ մը գտէք, պատասխանեց: Կրնա՞ք գտնել:

— Պիտի ջանամ:

— Անգործութենէ այնքան կը տառապիմ որքան անօթութենէ, ըսաւ քովէս քալելով: Մուրալը տաժանելի բան մըն է ինծի համար... կը-

նամ աշխատիլ: Բայց Ռուսիոյ այս քաղաքին մէջ աւելի մարդ կայ քան աշխատութիւն, ինչպէս ամէն տեղ:

—Անուննիդ ինչ է:

—Բլաթօն Պակրօֆ... Ինչպէս կը տեսնէք, գիւղացի եմ: Ուսմունքս աւարտեցի գիւղին դպրոցին մէջ: Շատ աղէկ կը սորվէի. ուսուցչունին չա՛տ կը սիրէր զիս. այնպէս որ ծեր կալուածատիրուն մը համոզեց՝ իր ծախքովը բարձր դպրոց մը դնելու համար զիս:

Սեւ խոշոր բիծեր ունէր աչքերուն տակը: Իր արծուային քիթը ցուրտէն կարմրած էր: Ձեռքերը հին տափաստի մը գրպաններուն մէջ կ'անհրեւութանային, կոնակը ծռած էր, և իր լայն ուսերը մսկոտ չարժումով մը կը կծկուէին: Մինչեւ վիզը կոճկուած բարակ բաճկոն մը, կրունկերը արուած բարձր կօշիկներ և հինցած ճութկած գլխարկ մը՝ իրեն երգէտնիկ զարնողի մը երեսոյթը կուտային: Կամաց, կամաց կը խօսէր, առանց տրտմութեան, առանց ձայնին մէջ աղաչողական շեշտ մը դնելու և իբր թէ ինք ալ ուշադրութեամբ հետեւած ըլլար իր պատմութեանը, անոր ճշգրտութիւնը հաստատելու համար:

—Չորս տարի Բօլէժը մնացի: Մայրս մեռաւ երկրորդ տարին: Իաշտին մէջ ճամբան կորսուած էր. սառած դտան զայն: Հայրս անկէ առաջ մեռած էր: Երբ չորրորդ տարին կը թեւակոխէի, ծեր կալուածատիրուն ալ մեռաւ իր կարգին: Անոր ժառանգորդները, չուզեցին շարունակել բարեգործութիւնը. ստիպուեցայ Բօլէժը թողուլ: Այսպէս իմ դաստիարակութիւնս վերջ գտաւ...

...Յաջողեցայ դոնապպանի պաշտօն մը գտնել երիտասարդին, ինծի ճանչուր համակրելի ծերուկի մը քով, որ քանի մը տարիներէ ի վեր թողած էր համալսարանին մէջ իր ուսուցչութեան պաշտօնը և համեստօրէն կ'ապրէր: Իր տունը պղտիկ և սիրուն էր, քաղաքին արուարձաններէն մէկուն մէջ: Չորս կողմէն շրջապատուած հինաւուրց թմբիներէ, պարուրուած թանձր ստուերներէ և բուրմնաւէտ լեւակներէ և աքսիաններէ, ամառուան միջոցին կը նմանէր գալարիքներու ծովուն մէջ կորսուած խաղաղ ու ասպնջական կղզիի մը: Բրօֆէսէօրը աղջիկ մը ունէր, աղջիկ մը կապոյտ աչքերով, հնչուն քրքիջներով, գուարթ, չփացած: Բաւական աղէկ դաշնակ կը զարնէր, կը գծագրէր, օրուան գիրքերը կը կարդար և միշտ ճերմակ հագուստներ կը կրէր: Իրեն այնքան կը վայելէն այդ հագուստները որքան ճերմակ կեղեւը ցարասիին: Շատ մը բարեկամուհիներ ունէր, ամէնքն ալ իրեն պէս վայելչաճեւերքինմն ուսանողներ ալ կ'ընդունէր, բարեկիրթ, զարգացած երիտասարդներ, որոնք կը հետաքրքրուէին գեղարուեստական խնդիրներով: Ստորնայարկին մէկ սենեակին մէջ ամէն գիշեր քրքիջներ ու աղմուկ կար: Կը խաղային, կը վիճաբանէին, ոտանաւորներ կը կարդային, կը

պարէին, և ծեր Բրօֆէսէօրը անկիւն մը նստած, այդ երիտասարդներուն զուարթութեանը վրայ կը ժպտէր, մոխրագոյն մօրուքը շոյելով: Յաճախ ես ալ կ'երթայի և ամէն անգամուն Բլաթօնը կը տեսնէի: Հիմակ դէմքին խորշերը և աչքերուն սեւ շրջագիծերը անհետացած էին: Մութ գոյն հաստ բաճկոնակ մը կը կրէր, գունաւոր շապիկի մը վրայ, սեւ տափատ մը և կաշիէ բարձր կօշիկներ: Այս քիչ մը ոչ-սովորական հագուստովը կ'ուզէր անշուշտ ամէնուն աչքին երեւալ: Բարձրահասակ և նիհար՝ կոշտ շարժուձեւեր ունէր: Կարճ և թխագոյն մազերը, փափկօրէն կը գանգրուէին: Աչքերը մտախոհ և խաղաղ արտայայտութիւն մը ունէին և ինքզինքին կարեւորութիւն տուած ըլլալու զգացումը կը կարդացուէր խոշոր ցցուածքներով դէմքին վրայ: Երբ տունին մէջ տեսնէր զիս, քաղցրութեամբ կը բարեւէր, առանց բառ մը փոխանակելու: Բաւական փափկանկատութիւն ունէր իր տէրերուն առջեւ ընաւ հետս չխօսելու, զգալով անշուշտ որ դժուարին կացութեան մը մէջ պիտի դնէին մեզի: Բայց երբ զինքը մինակ գտնէի բակին մէջ, ձեռքս կ'երկարէի և կը սկսէինք խօսակցութեան:

— Ի՞նչպէս, Բլաթօն, հոստեղէն գո՞հ ես:

— Վերջին աստիճան, կը պատասխանէր երախտագիտօրէն. թէև ուզածիս չափ շատ պարապ ժամանակ չունիմ, սակայն կրնամ կարդալ. կը մտածեմ որ բաւական պիտի օգտուիմ այս տունէն: Շատ բան տեսնել, զգալ, աշխատիլ, խորհիլ, ահա լաւագոյն կեանքը, այնպէս չէ՞:

— Այո՛, այո՛, ըսի սքանչանալով իր եռանդին վրայ. ամէնէն առաջ պէտք է լաւ գիրքեր կարդալ: Տէրերէդ գո՞հ ես, հարցուցի իրեն օր մը:

— Շնորհքով մարդիկ են անշուշտ: Արդէն աղէկ բան մըն է սպասուորներուն երեսին չպոռալը, և անոնց հետ կոշտութեամբ չվարուիլը: Ասիկա շատ հազուադէպ է: Օրիորդը շատ զուարճասէր է: Կը վազէ, կը պոռչտայ, դէմքի ծամածռումներ կ'ընէ: Ամէն ատեն մաքուր է:

— Լիտիա Ալէքսիէվնաի համար ըրած այս դատումը հաճոյք չպատճառեց ինծի:

— Ասոր հետ մէկտեղ սիրուն է, նազելի, նոյն իսկ բարի և հակառակ քմայքներ ունենալուն, մարդերու հետ աղէկ կը վարուի: Երբեմն սենեկապանուհիին երեսին կը պոռայ, ոչ անշուշտ շարութիւնով, այլ տղայութեան:

— Բայց քեզմէ տարի մը պզտիկ է, առարկեցի:

— Ասիկա կարեւորութիւն չունի, ըսաւ ցած ձայնով: Ամէն տեսակ տարիքներ կան. պէտք է ժամանակը չափել մտածումներու տեսակէն և շատութենէն:

Բլաթօն կը հպարտանար կեանքի մասին ունեցած իր փորձառութեանը վրայ, իրաւունք ունէի չհաւատալու իր ըսածներուն: Շատ անգամ նշմարած էի որ երբ Լիտիա Ալէքսիէվնա իր առջեւէն կ'անցնէր, ձեռքը

գլխարկին կը տանէր կասկածելի արագութիւնով. զլուսը յարգանքով ծռելով՝ ձախլիօրէն խոնարհութիւն մը կ'ընէր, իբր թէ վախնար որ կ'ահաբեկեցնէր երիտասարդ աղջիկը իր երկար հասակովը՝ որ գէշ շինուած զանգակատունի կը նմանէր։ Իր տիրուհիին հետ բաղդատելով՝ արտասովոր բարձրութիւն մը և ձեւերու անշնորհութիւն մը ունէր։ Այդ բարեւեներուն կարեւորութիւնը չէի հասկնար, բայց Լիտիա նշմարած էր զանոնք։ Բնական է։ Կինը այրերուն վրայ ամէնէն ծիծաղելի բանն է որ կը նշմարէ։ Երիտասարդ զուարթ աղջիկը դռնապանին մասնաւոր ուշադրութիւնով մը կը նայէր, սիրալիր կերպով կը ժպտէր անոր, երբեմն մէկ երկու անիմաստ խօսքեր իբր ողորմութիւն կը շնորհէր անոր. նոյն իսկ անգամ մը հարցուց Բլաթօնի անոր փայտ կոտրած ստեղծ, թէ չէ՞ր յոգնած։ Անգամ մը ինձմէ խնդրեց որ պատմեմ թէ ի՞նչպէս բարեկամացած էի Բլաթօնի հետ։ Բաղձանքը կատարեցի և ըսի վերջացնելով խօսքս։

— Ծատ յանձնապատասխան մէկն է, ինքզինքը արտասովոր անձնաւորութեան մը տեղը դրած է։ Խօսքերուս ուշադրութիւն չըրաւ։

— Տարօրինակ մէկն է, ըսաւ մտածկոտ քմծիծաղով մը։ Այնքան խոշոր, այնքան ծիծաղելի է... ինքզինքին փիլիսոփայի հով մը կուտայ։ Խոհանոցին մէջ զինքը կը ծաղրեն այս բանին համար։

Յետոյ պատմեց որ տունին սպասաւորները զինքը խենթի տեղ դրած էին, որովհետեւ սենեկապանուհիներուն հետ չէր սիրաբաներ, այլ անդու կը կարգար, ամէն տեսակ զիրքեր կը կարգար. շարունակ, Խոհարարուհիին և սենեկապանուհիին աչքին, իր այդ վարմունքը դռնապանի մը արժանի չէր նկատուեր։ Ծատ կը խօսէր, անհասկնալի ուռուցիկ ոճով մը, ամէնուն շանքարող կը կարգար, ինչ որ իր ընկերակիցներուն ջիղերուն կը դպչէր։

— Պէտք է, ըսի, զինքը համոզել, որպէս զի ուսուցչութեան քննութիւնը անցընէ գաւառները երթալու և ժողովուրդին միտքը լուսաւորելու համար։

— Այո՛, ըսաւ Լիտիա, ատիկա աւելի աղէկ պիտի ըլլայ, իրեն արժանի չէ այս դործը։

Եւ այդ վայրկեանէն՝ Բլաթօնի հանդէպ ունեցած համարումը աւելցաւ. անուշտ չէր խորհեր անոր մէջը հէքեաթունակ ծպտուած իշխան մը գտած ըլլալ, այլ պարզապէս որովհետեւ տարօրինակ կը թուէր իրեն ճանչնալ զգացունները մարդու մը՝ որ տունին բակը կ'աւլէ։

Փարունը եկաւ, ագուռները հետը բերելով։ Հինաւորաց թմբիններուն մէջ, որոնք կը հովանաւորէին տունին տանիքը, կ'արձագանդէին թռչուններուն աղմկալից պողտուքները։ Կը նշմարէի որ Բլաթօնի աչքերուն խորը արտասովոր նայուածք մը կար, շատ հեռուները ուղղուող. զարմացումէն խոշորցած՝ տրտում ժպիտով մը կը ժպտէր։ Օր

մը ապրիլի խաղաղ մէկ իրիկունը, հարցուց ինծի ցած ձայնով, դուռը
դոցած միջոցին.

— Կաղը կրնամ ձեզի գալ :

— Իրիկուն, ժամը հինգէն վեց, եթէ կ'ուզես, ցտեսութիւն :

Որոշուած ժամուն եկաւ, յաւիտենական բաճկոնակը հագած: Բռնազ-
բօսիկ ժպիտ մը փթեցաւ չրթունքներուն վրայ և նստաւ, իյնալու
ձեւով մը, սեղանին մօտիկը: Սկսայ կարգացած գիրքերուն վրայ խօսիլ
բայց ատիկա չէր չահագրգռեր. զինքը. մտածելով կը պատասխանէր,
գրեթէ ակամայ: Տրտմութիւնը իր արտակարգօրէն ցցուած այտերուն
չէր ազդած. շատ ծիծաղաշարժ կերպարանք մը առած էր:

— Ի՞նչպէս ես, հարցուցի:

— Ինքզինքս շատ աղէկ չեմ զգար կոր. այդ տունին մէջը հանգիստ
չեմ ընելի հիմակ: Այդքան աղէկ, մաքուր տուն մը և պատուական
խելացի անձեր, կը խորհէի որ անոնց քովը պիտի հանգստանամ, շատ
բան պիտի սորվիմ: Միտքս բան մը չըմբռներ, կը նեղանամ... և նոյն-
խակ... սկսեի եմ ոտանաւորներ գրել... այո՛:

Երեսս նայեցաւ և հարցուց խղճուկ ձայնով մը.

— Ըսածս խնդա՞լ տուաւ ձեզի:

— Բնա՛ւ, ըսի քաջալերական շեշտով մը, կարդա՛ տեսնեմ ոտա-
նաւորդ ու ան, մեղմ ձայնով մը, գլուխը շարժելով, աչքերը տրտմո-
րէն բանալով.

Գիշերը կ'իջնէ: Պատահանին առաջը նստած եմ
Պարսեղը կը լնանայ, մրութիւնը եւ շուրթիւնը կ'իջիւն
Գիշերուան շին խաւարին մէջ կը մխրճեմ նաշուածս
եւ հոգիս ակամայ կը հծծէ.
«Ինչո՞ւ սիրես այսքան ինքու ու ճառապագին Ե, ինչո՞ւ»:

Ուրիշներ ալ կարգաց... յետոյ ուրիշներ ալ: Ոտանաւորները կօ-
շիկներուն հոտը ունէին և կուտրոնի ու գէշ ծխախոտի հոտ մը: Թւերը
ծակած բաճկոն մը կը կրէր, օձիքը կոճակ չունէր, դուրս պոռթկացնե-
լով ամբողջովին վիզը, որուն երակները ուժգնօրէն կը զարնէին: Շա-
րունակեց ընթերցումը: Իր միօրինակ, ցած ձայնը, յիշեցնել կուտար ինծի
մահուան աղօթքին սաղմոսերգութիւնը: Քիչ մը կենալէ վերջը, երեսս
նայեցաւ շեշտակի, և յետոյ վերսկսաւ նոր հառաչ մը արձակելով.

Ծովին անդին քան մը ինծի դժբախտութիւն կը սպառնայ
Մեղկութեան որդը հոգիս կը կրծէ,
Բայց, իր բոլոր ջուրի տարածութիւնովը, ծովը
Արեւմտ սիրեսս այս սէրը անհետացնել: Մնա՛ք բարո՛ւլ:

Վերջապէս լռեց, և աթոռին վրայ անշարժ կեցաւ: Զանձրոյթի
զգացում մը խուժեց ներսիդէս: Կը վախճայի թերեւս որ կ'ելլէր կու-

լար: Բիչ մը խորհելէ ետքը՝ որոշեցի վերաբուժներու պէս գործել, որոնք մէկ հարուածով կը հանեն ինչ որ աւելորդ է:

— Սիրահարուած էք, հարցուցի տեղէս ելլելով և ձեռքս ուսին վրայ դնելով:

— Այո՛:

— Որո՞ւն, Ֆեքլուղա սենեկապանուհիին: Զարմացկոտ երեւոյթով մը յօնքերը վեր առաւ ըսելով:

— Նոյն ինքն Լիտիա Ալէքսիէփային...

Կռահած էի արդէն, բայց չէի կարծեր որ ասանկ բացայայտօրէն պիտի խոստովանէր. պիտի նախընտրէի այդ խոստովանութիւնը չլսել իր իսկ շրթունքներէն: Հակառակ ծիծաղելի ըլլալուն՝ կացութիւնը քիչ մը տաքնապալի էր:

— Գիտե՞ս, սիրելի բարեկամս, ըսի կարելի եղածին չափ հանդարտօրէն, գիտե՞ս, որչափ ղուարճալի է ըսածդ:

— Զուարճալի՞, պոռաց խղղուկ ձայնով մը, եւ աչքերը զարմացումէն խոշորցած:

— Է՛հ, այո՛, ըսի, ինծի համար նոյն իսկ դժուար է քեզի հետ լրջօրէն խօսիլ այդ խնդիրին վրայ:

— Ինչո՞ւ:

[Յաջորդով]

Թարգմ. Ն. ԵԱՋԸՃԵԱՆ

ՍԻՐՏԻ ԿԱՂ

Ուզեցի որ ամեն բան սիրեմ. դժբախտ եմ սակայն,
Որովհետեւ վիշտերուս պատճառները բազմացան.
Անբիւ զօդեր սրտաւէտ, դիւրաբեմ ու երերուն
Հիւսա հոգիս կը կսպեն տեղերս իրերուն:

Ինծի համար ամեն բան հմայք մ'ունի անփոփոխ.
Ճշմարտութիւնն՝ իր փայլը ու անծանօթն՝ իր նուրբ փող.
Ոսկի ծիր մը շուսաշող սիրտս արեւին կը կցե,
Ու շողերուն աչք քարակ, երկար քեշերն մեռափս:

Նուագներուն մեղանուշ վանկերը զիս կը կարքեն
Ու մտքներս կը փառեն քաւիչ հմայք մը վարդեն.
Ժպիտ մը լոկ բաւ եղաւ իմ աչքերս քովերու,
Շրթունքս մեկ համբոյրով կաշկանդուած է հշու:

Կիսմա կախուած կը մնայ այդ քեշերէն դիւրաբեմ,
Սիրած հազար իրերուս կապուած հոգի մըն եմ հեմ.
Եւ կը զգամ րեկ կը խուռի մաս մը ինձմէ, միշտ խորէն,
Երբ անոնք մեղմ շունչէ մը կը սարսուսն մեղմօրէն:

ՍԻՒԼԼԻ ԲՐԻՒՑՈՒ

Թարգմ. ՓԱՅԼԱԿ

ՊԱՏԱՍԻԱՆ

ՄԱՍՄԱՍԻ ԶԱՐԳՈՒՄԻՆ.

Անցեալ Թիւերէն մէկուն մէջ, միեւնոյն հարցումին պատասխանելով, ՄԷԼՈՒՅԷՆ պատմած էր մեզ Վանտէրպիլթ որդիին մէկ անէկտոմը, գերազանցապէս ինքնատիպ ու եանքիաբոյր:

Ատիկա մէտայլին մէկ կողմն էր միայն. հիմա դարձնենք միւս կողմը:

Անցեալները Բարիզեան բոլոր Թերթերը լեցուն էին ոճիւրի մը պատմութիւնովը, որ իր յարակից պարագաներովը ուշագրաւ էր շատ ու յազդիչ այնչափ որչափ կրնայ ըլլալ: Ու այդ առթիւ Թէ ոճրագործին, Թէ զոհերուն կեանքը սկսան խառնել, անցեալը խուզարկել և երևան բերել պարագաներ՝ որոնք ոչ միայն զարմանալի էին ու սրտազրաւ, այլ կրնային ազդել ներկայ ոճիւրին առթիւ տրուելիք դատաստաններուն վրայ:

Դերեոմ մը, և ամէնէն վաւերական տեսակէն, որուն հայրը կոմս տը Բ... , նախկին ծերակուտական, ղրկակներու տէր, մեծափարթամ սքորթմէն մըն էր, կը սիրահարի աղքատիկ ու աղուողիկ գործաւորուհիի մը, որ ատենէ մը ի վեր կը պէրէր իրեն, առանց գոհացում մը տալու: Կ'երեւայ այն օրերէն ի վեր ղերկոմսուհի ըլլալի՜ն ոսկեգօծ երազներ կը հիւսէր, և անոր համեմատ *magnèuvrer* կ'ընէր, իր կնոջական բովանդակ հնարագիտութիւնով: Կ'արձ խօսինք, երկտասարդը կատարեւապէս բռնուած էր ցանցին մէջ, անկեղծ ու անսահման սիրով մը կը սիրէր իր սիրտին ընտրածը և կը կարծէր փոխադարձաբար նոյնչափ անշահախնդրօրէն սիրուած ըլլալ: Այն աստիճան որ, ասպետական վեհ շարժուածքով մը ոտքի տակ կ'առնէ ղերկոմսութիւնը, ապագայ կոմսութիւնը, հարստութիւնը, ղրկակները, հանգիստ կեանքը և վանտէրպիլթ Որդիին պէս ամուսնանալով իր հօրը մերժած աղջկան հետ, օրական հացը շահելու ետեւէ կ'ըլլայ: Մէկ-երկու տարի ամէն տեսակ գործեր կ'ընէ, կը շահի, կը վստահ, կը հիւանդանայ, մարդու քով կը մտնէ, և երեք տարի վերջը Պուլվարներուն վրայ արդէն իսկ լրագիր կը ծախէր: Եւ սակայն օր մը օրանց

չէր գանգատեր, չէր ղժգոհար իր վիճակէն. կը պաշտէր միշտ առջի օրուան պէս իր կինը և կը ջանար զգալի չընել անոր իր աղքատութիւնը և ինքզինքը շատ բաներէ կը զրկէր կնկանը աւելորդին յատկացնելու համար: Բանի քանի անգամներ հօրը կողմէն միջնորդողներ կ'ըլլան որ կնիկը ձգէ և իր առջի վիճակին տիրանայ նորէն: Ինք արհամարհելով կը մերժէր միշտ:

Օր մը սակայն ինչ մեծ կ'ըլլան իր ապշուածութիւնը ու յուսահատութիւնը, երբ ղրկաուածով կը տեսնէ իր կինը ու ղրպիք բժիշկ մը, որ ժամայրավայր պանդոկ մը կը մոնային: Կատաղութիւնը չափ ու սահման չունէր: Ինչ, Ինք աշխարհը ուրանար այդ միակ կնկանը տիրանալու համար, և ան՝ մատնէ՜ր զինքը, Թքէր իր պատիւին վրայ, պղծէ՜ր իր սէրը: Այլ բան գործ կը ձգէ և քննութեան մը կը սկսի, Թէեւ առանց բան մը յայտնի ընելու: Եւ կը ստուգէ որ բաւական ատենէ ի վեր կը խաբուի եղբոր ինք: Անգամ մըն ալ կը լրտեսէ և երրորդին լէվուլէրով մը կը սպասէ սիրահարներուն դուրս գալուն և երկուքն ալ կը փռէ գետին:

Վեց ամիս ետքը Երգուեալներուն առջին կ'ըլլայ, որոնք զինքը անպարտ կ'արձակեն առանց այլուայլի: Դատավճիռին արձակութիւն վայրկեան մը վերջը, նոյն իսկ դատասրահին մէջ, կոմսը ու տղան իրարու ղրկի կ'իյնան, կ'ողջագոյրուին ու կը հաշտուին:

Տղան ամէն բան ոտքի տակ առած էր, բայց պատիւը անարատ մնացած էր:

Ահաւասիկ Վանտէրպիլթի պատմութեան *thèse contradictoire*, նոյնչափ վաւերական տեսակէն:

Բայց եթէ այս երկու պատմութիւնները իրար չեզոքացուցին, Մասիսի հարցումը կայ ու կը մնայ անդին, ո՞ր Մէլսէտէս:

ԷՏՄՈՆ ՏԱՆԹԷՍ

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԻՐՈՐ. — Հաւաքածոյ Ընթիւ Գրուածոց, Միման Գրամմատիկ: Ա. Մաս, արձակ և ոտանաւոր, աշխարհիկ լեզու(աշ-եղաւ): — Բնական Գիտութիւնք, երկու պրակներ, Արամճիկ-ղոսեանի: — Հաւուեզիւրք, Յակոբ Տրէզուանի:

ՊԷԹՈՎԷՆԻ ԿԵԱՆՔԷՆ ԴՐՈՒՍԴ ՄԷ

Պէթովէն տասնըվեց տարեկան եղած ատեն, Պօն քաղաքին արքունի երաժիշտն էր: Մաքս Ֆրանսիզ՝ Գօլծենի իշխանը՝ Պօնի մէջ պալատ մը ունենալով, հօն կը բնակէր. երիտասարդ երաժիշտին մասին հետաքրքրուեցաւ և անոր օգնելու նպատակով զայն կարծ միջոցի մը համար զրկեց Վիէննա, որ այն ատեն աշխարհի ամէնէն մեծ երաժշտական կեդրոնը և երբ մեծագոյն վարպետներու հայրենիքն էր: Մօցառ, Հայտըն և Կլաբ, իշխանը Պէթովէնի յանձնարարական նամակ մը տուաւ իր եղբօրը Ժօզէֆ Կայսեր յանձնուելու, զոր ինք անձամբ Կայսեր պիտի մատուցանէր: Վիէննա հասնելէն շատ չանցած, իր էն գեղեցիկ զգեստները հագած դէպի արքայական պալատը ուղեւորեցաւ, նամակն ալ զրպանը: Թէպէտ իրմէ բարձր աստիճանի մարդոց հետ տեսնուելու մէջ իր ունեցած զգայնութեանը և վախին մինչև մէկ ատտիճան յաղթած էր, սակայն զարձեալ իր սրտին մէջ մեծ երկոտուծիւն մը կը զգար: Սա զաղափարով թէ՛ Աւստրիոյ Կայսեր հետ պիտի տեսակցէր: Մինչ ներս կը մտնէր այն դուռնէն, որ Կայսեր յարկաբաժինը կ'առաջնորդէր, պահ մը կանգ առաւ խորհելու թէ՛ ինչ պիտի ըսէր Նորին Վեհափառութեան: Նոյն ատեն պարզ կերպով հագուած պարոն մը ներկայացաւ և ղեռատի տղուն կերպարանքէն զրաւուելով անոր մօտեցաւ:

— Ո՞ր երթալ կը փափաքիս, հարցուց ան քաղցրութեամբ: Պէթովէն անոր նայեցաւ, խորհելով թէ թերեւ իրեն հետ կը զուարճանար: Բայց օտարականին ամբողջ երեւոյթը կարեկցութեան արտայայտութիւնը ունէր: Իր քիչ մը երկայն դիմագիծը, զուարթ և բարեկամական աչքերը, իր բերնին անուշ արտայայտութիւնը իրեն քաղցրական տարօրինակ յատկութիւն մը կուտային: Ճակատը բարձր, քիթը հոտմէական, դէմքին վրայ քանի մը ծաղկանշաններ բնաւ իր գեղեցկութիւնը չէին խաթարել: Բնականաբար ղեռատի երաժիշտը անոր տեսքէն հաճոյք զգալով պատասխանեց.

— Կայսեր երթալ կը փափաքիմ:

— Աղբրսագի՞ր մը ունիս:

— Ոչ, յանձնարարական նամակ մը:
— Որո՞նք կողմէ, եթէ կը ներես որ հարցնեմ:

— Կայսեր եղբօրմէն, Մաքս Ֆրանսիզ Գօլծենի իշխանէն:

— Տեսնեմ:

Պէթովէն նամակը ցուցուց. օտարականը հպացէն և կնիքը շիտակ գտաւ:

— Բայց դուն ով ես, հարցուց պարոնը:

— Ես երաժիշտ մըն եմ:

— Երաժիշտ մը? Կրկնեց օտարականը վայրկեան մը մտածելէ ետքը. յետոյ շարունակեց.

— Կայսրը այս պալատը չէ, բայց զինքը կրնաս տեսնել այս իրիկուն ժամը եօթին իր Օկարթէնի պալատին մէջ:

— Դուք Կայսրը անձամբ կը ճանչնա՞ք, հարցուց Պէթովէն:

— Այո, անշուշտ, պատասխանեց միւսը:

— Արդեօք անոր քովը պաշտօն մը ունիք, դիտել տուաւ երիտասարդը:

— Զինքը երբեմն կ'ածիլեմ, ըսաւ միւսը:

— Բնութիւնը խի՞տո է թէ ոչ, հարցուց երաժիշտը հաւատարմութեամբ:

— Ե՛հ, այնչափ գէշ չէ, ըսաւ ան ժպտելով, բայց իբր երաժիշտ խիտ է:

— Դիտեմ թէ ան շատ լաւ դաշնակ կ'ածէ, բաւական վարպետ է թաւջութակի և նոյն իսկ սօֆաքներ կը յօրինէ, պատասխանեց Պէթովէն. բայց մեծ պարոնները ընդհանրապէս երաժշտութեան մէջ մինչև մէկ աստիճան առաջ կ'երթան: Անցեալ օր Մօցարթի սօֆաք մը ցուցուցեր է, անոր զաղափարը հասկնալ ուզելով: Մօցարթ պատասխանեց իր թէ՛ թէպէտ սօֆաքը լաւ է, բայց զայն յօրինողը շատ աւելի լաւ:

— Ատիկա գեղեցիկ պատմութիւն մըն է, ըսաւ օտարականը խնդալով: Բայց ես հիմա պէտք է երթամ, ժամը եօթին Օկարթէն գտնուէ:

Երբ Պէթովէն այս միջադէպը իր բարեկամին Վօլքմայնին պատմեց, ան յորդորեց զինքը որ իրեն ըստովին պէս ընէ:

Իրիկունս ժամը եօթին, Օկարթէնի պալատը հասաւ: Դուռը կեցող սպասարկուն զինքը սանդուխներէն վեր՝ պզտիկ, գեղեցկօրէն զարդարուած հիւրանոց մը առաջնորդեց, որուն պատերը աւերակներու պատկերներով

և ուրիշ գեղեցիկ նկարներով զարդարուած էին: Դէպի ձախ, նեղ ու երկայն սենեակ մը կար՝ որուն անկիւնները դեղձանիկի վանդակներ կախուած էին, և ճիշդ մէջտեղը պզտիկ սեղանի մը վրայ անուշահոտ ծաղիկներու ծաղկաբույսեր դրուած էին: Դէպի աջ, ուրիշ երկու մեծ սենեակներ կային, որոնցմէ մէկը հիւրանոց և միւսը ննջասենեակ էր: Պէթովէն առաջինին մէջ առաջնորդուեցաւ: Հոն երկու պարոններ կային, որոնցմէ մէկը ճանչցաւ իբր պէն պարոնը՝ որ երբեմն Կայսրը կ'ածիլէր: Իսկ միւսը հասակով կարճ, դէմքը անուշ և պայծառ էր: Արդեօք ա՞ն էր Կայսրը: Պէթովէնի առած տեղեկութեանց համամատ՝ Կայսրը աւելի երկայնահասակ պէտք էր ըլլաւ: Հաւանականաբար անոնցմէ ոչ մէկն էր, որովհետեւ անշուշտ սափրիչը չէր կրնար ըլլալ: Արդեօք խօսէ՞ր անոնց, Բայց ոչ, ատ ալ չէր կրնար ըլլալ, որովհետեւ երկուքն ալ տաք խօսակցութեան մէջ էին: Այսպէս դարձ սեմին վրայ կեցաւ և սպասեց: Քիչ ետքը Պէթովէն չառնաց ներողութեան բառեր արտասանել, բայց նոյր բանեղը շրջունքներուն վրայ չէին գար: «Ձեր վեհափառութեանը ներողութիւնը կը խնդրեմ. դուք ինծի ըսած էիք թէ դուք երբեմն ը-ը-ը, երբեմն»:

— Այո, ինքզինքս կ'ածիլեմ, ըսաւ խնդալով, և միւս պարոնին պատմեց նորեկին հետ ունեցած իր առաջին տեսակցութեան պատմութիւնը: Յետոյ շարունակեց. «Հիմա նամակը ինծի տուր տեսնեմ»: Նամակը կարդալէ ետքը դարձեալ միւսին դառնալով ըսաւ.

— Եղբայրս Մարս Ծրանսիգ ինծի՝ կը յանձնարարէ այս երիտասարդը իբր շատ տաղանդաւոր երաժիշտ մը, որուն համար կ'ըսէ նաև թէ շատ լաւ դարձուածքներ կ'ընէ եղանակներու վրայ: Ինչպէս կ'ըլլայ եթէ անմիջապէս փորձ մը ընենք:

Կարճահասակ պարոնը հաւանութիւն տուաւ:

— Դուք ալ կը հաւանե՞ք, Պրն. Պէթովէն, հարցուց Կայսրը:

— Ամենայն սիրով, պատասխանեց երիտասարդը, որուն վրայ երբեք ալ մօտեցան դաշնակին, որչսենեակին մէկ անկիւնը բաց կըլլենար:

— Դուք Մօցարթի կտորներէն կը զարնէ՞ք երբեք, հարցուց Կայսրը միւս պարոնին ակնարկ մը նետելով:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց երիտասարդը:

— Եւ ի՞նչ կարծիք ունիք անոր վրայով:

— Սա կարծիքը ունիմ թէ ան ամենամեծ երաժշտագետն է զոր աշխարհ երբեք տեսած ըլլայ: Ժօհան Սէպանթին Պոխ եկեղեցական երաժշտութեան մէջ աւելի բարձր է, Հէնտըլ Օրաթօրի մէջ, բայց թատերաբեմին վրայ՝ Սալզպուրկիցի երգահանը կը զերազանցէ մինչեւ իսկ Կլուքը:

— Անոր կտորներէն գոց գիտե՞ք, հարցուց Կայսրը զուարթօրէն խնդալով:

— Ձեր վեհափառութիւնը կրնայ հրամայել որ կտորը քր. ուղէ:

Կայսրը վայրկեան մը մտածելէ ետքը ըսաւ.

— Սարադօրի եղանակը զարկ և անոր վրայ փոփոխումներ ըրէ:

In diesen heil'gen Hallen

Kennt man die Rache nicht.

Պօնցի երաժիշտը դաշնակին առաջը անցաւ և այդ մեղեդին այն տեսակ հպարտութեամբ և կատարեալ զգացումով զարկաւ որ, թէ Կայսրը և թէ միւս Պարոնը յայտնապէս զարմացան և իրենց զարմացումը ալ աւելի մեծ եղաւ երբ Պէթովէն կտորը լմացնէլէ ետքը անոր վրայ արձակ փոփոխումներ ըրաւ այն տեսակ առատածեւութեամբ և զրեթէ զերմարդկային ձայնակցութեամբ որ՝ փոքր պարոնը մէկէն աղաղակեց.

— Շատ գեղեցիկ, սքանչելի, հիմա կը փախաբիմ ձեր յօրինած կտորներէն մէկը մտիկ ընել:

Հռենոսցի երիտասարդը այս առաջարկն ալ ընդունելով իր կտորներէն հատ մը զարկաւ, որուն համար փոքր մարդը ոչ միայն սքանչելի՝ այլ մեղեդիին համար ճշգրտովին նոր, հմայիչ և անզուգական՝ կարծիքը յայտնեց: Կայսրը անոր դառնալով.

— Լաւ, հիմա Պօնէն եկող այս դեռատի երաժիշտին մասին ի՞նչ կը խորհիք:

— Ան իր արհեստին մէջ առաջիններէն մէկը պիտի ըլլայ, պատասխանեց ջերմեան յօրէն և իր ձեռքը Պէթովէնի երկնցուց:

— Բայց գիտե՞ս թէ քու մասիդ այդ որոշումը տուողը ով է: Ձեր գիտեր: «Ոչ» պատասխանեց ան:

Ան վիշփկանկ Աժատէօսու Մօցարթն է, ըսաւ Կայսրը շեշտելով: Պէթովէն ուրախու-

Քեան աղաղակ մը արձակեց: Հիմա տաք խօսակցութիւն մը սկսաւ, որուն կը մասնակցէին Կայսրը, Մօցարթը և Պէթօվէն երեքը: Կայսրը հարցուց երիտասարդին թէ չէ՞ր ուզեր Վիէննա գալ և հոն բնակիլ: Ոչ, շատ կը փափաքէր, բայց պաշտօնը ետ կը կանչէր զինքը: Ան յուզումով իր բարի մօր և փոքր եղբայրներուն վրայ խօսեցաւ և երախտագիտութեամբ իր տիրոջ Մաքս Ֆրանսիզի գովեստները ըրաւ: Մինչ երկու հիւրերը կը մեկնէին Պալատէն, Կայսրը Պէթօվէնի մատնի մը տուաւ իբր յիշատակ: Երեւելի երգահանին անցուցած ամէնէն ախորժելի օրերէն մէկն էր աս: Ան մէկ տեսակցութեամբ թէ Ժօզէֆ Կայսրը և թէ Մօցարթը տեսած էր:

Թարգ. Օ. ԹԻՄՈՒՐԵԱՆ

ՄԱՀԵՐ

Նստիորդ շաբթու, Մասիսի հրահարակումէն ետք, ցաւով լսեցինք թէ մեծանուն դաստիարակ եւ հարգիչ Բօծ. Յակոբոս էժ. ձեռնիզեան դժբախտութիւնը ունեցած է կորսնցնելու իր հոյրը: Զարմանալի զուգահիշարթիւնով մը, մինչ յարգելի Բօծէտէօրը Ասարազար կը զսնուէր, հրաւիրուած խօսելու Հայուհեաց Վարժարանի ընթացաւարտներուն՝ վերջին խօսքը, թուր հարկին ճակ կը մնար հետեւելու իր քոչ դպաղիկն, լինել ստիպուելով իր աշնչափ սպասուած նստը: Այս դառն կորուստին առիթով, մեր իւր ցաւակցութիւնները կը յայտնենք յարգելի Բօծէտէօրին, ձեռնիզեան ընթանիքին եւ պարագաներուն:

★ Վերջին պահուն ցաւով կը լսենք մահը ձեւագիտութեան ուսուցիչ Մելեմ էժ. Գալէնտէրի, որ չկրնալով դիմադրել զին՝ ջանջող հիւանդութեան (կցաղեսայ) կ'աւանդէ իր հոգին չորեքշաբթի իրիկուն, Գրնալլի իր բնակարանին մէջ: Մելեմ էժ. անձամբ մը չէ համբային կեանքին մէջ, որչափ իբր ուսուցիչ ձեւագիտութեան, որուն մէջ արդիւնաւոր կեանք մը ու դեր մը ունեցած է, նոյնչափ իբր հեղինակ ձեւագիտական հրահարակութիւններու, որոնցմէ Ալպարը եւ Սեւան կը մնան մասնագի-

տական յիշատակելի գործեր: Իր արուեստին կատարելագործութեան հետեւում, Գալէնտէր էժ. երկու անգամ եւրոպա ուղեւորած է, ուսումնասիրելու համար հիւսուածագործութեան մեքենագիտութիւնը, եւ վերադարձին, իր մասնագիտական այդ հմտութիւնը ծառայեցուցած է դպրոցներու եւ ուսուցչութիւններու օգուտին: Կը բաժնուի արդիւնաւոր կեանքով մը, որ ողբացնել կուտայ իր կորուստը: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Գալէնտէր ընթանիքին եւ պարագաներուն:

ՀԵՏԱՐԳՐՈՒԹՅԱՆ

Պարուհի հսկայ աղջիկ մը, Մարիէլ, որուն հասակը 2 մեդր 516էն պակաս չէ, նշանուեցաւ Վալալակկայի մէկ ազարակաւոր զոմը՝ Էլիվ Տարիլի հետ: Ընտրութիւնը շատ յարմար եղաւ հսկայ աղջկան համար, որովհետեւ նշանածին հասակն ալ բանով մը վար չի մնար իր ապագայ կնոջ հասակէն, քանի որ 2.645 մեդրի բարձրութիւն մը ունի: Նշանածները իրարու ծանօթացան Լանտոնի մէջ եւ այս հանդիպումը կատարեալ զայբաղիժութեան մը շարժառիթ եղաւ: Թատերական ներկայացումի մը միջոցին, երբ Մարիէլ քննիկ վրայ էր, Տարիլ յանկարծական կերպով եւ ներկայութեանը հանդիսական բազմութեան, որ ապշած մնացած էր, հսկայ աղջկան նկատմամբ իր զգացած բոլոր սէրը յայտնեց հրապարակով: Հետեւեալ օրը, Սիւնին մօտէր արգիլուեցաւ իր առջեւ. բայց սիրահարը չքողոյց Մարիէլը եւ ինքնաշարժ կառնով անոր հետեւեցաւ միջեւ կիլեօր: Հոն՝ կրցաւ հսկայ աղջկան ներկայացումներուն վարիչը սիրաւորիլ, եւ վերջապէս, բաջալերուած այս առաջին յաջողութենէն, Օր. Մարիէլի ձեռքը խնդրեց ամուսնութեան համար:

★ Անգլիոյ քաղաւորին ժիւղին գրպաններուն մէջ կան մասիսի ոսկիէ կօթ մը, սիկատուսի մը, պզտիկ արկղի մը բանալին, ժամանակաշափ մը՝ լարուած սովորաբար կրիկիչի դիտարանին համաձայն եւ բոլոր մը ոսկեղրամ: Երբեմն արժաք դրամներ ալ կը զսնուին: Էսուարս է. նաեւ ծագի նուրբ տեսքով մը ունի, միտի ինկած բաները նշանակելու համար:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԻԻԻԻԻԻԻԻԻ: Արտօնատէր. ՏՄԻԻԻ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆԱՆ

Զարդարեան նկատելով որ մարդը պէտք էր կարող ըլլար քաղելու, կ'ըսէ հիւանդին որ քաղէ: Բայց մարդը քայլ մը իսկ չի կրնար առնել: Տօքթ. Զարդարեան կը հանգստեցնէ օգնականներուն թէ մնաւած եղած է պէտք եղածին պէս: Տօքթ. Իփլիքճեան կը պատասխանէ թէ հազիւ հինգ տասը վայրկեան մնաւած եղած է: Տօքթ. Զարդարեան կը խնդրէ որ ուշադրութիւն ընծայուի: «Այսչափ միայն կրնայ ըլլալ», կը պատասխանէ Տօքթ. Իփլիքճեան, և երբ պարտէզ կ'իջնեն, կը սկսի դիտողութիւններ ընել իր պետին: Տնօրէնը նոյն պահուն կը փութայ Հիւանդանոց, կը հարցախորժէ խնդրի առարկայ հիւանդը, և հաստատելով թէ ըսաւ մնաւած չէ եղած, Տօքթ. Իփլիքճեանը կը դադարեցնէ վիրաբուժական ճիւղին մէջ ունեցած օգնականի պաշտօնէն, և անոր տեղ կը կարգէ ներքին հիւանդութեանց բաժնին օգնական Տօքթ. Գազազեանը:

— Վիենն. Միթիարեան Հայերու Վարժարանին (Բանկալթի) վկայականներու բաշխման հանդէսը տեղի ունեցաւ հինգչ. օր: Ուրբաթ օր ալ Անարատ Յղութեան Քոյրերու և Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի մրցանակաբաշխութեան հանդէսները: Այս երեք վարժարաններուն հանդէսները գեղեցիկ ժամանցներ եղան իրենց ճոխ յայտագիրներով:

«ՄԱՍԻՍ»Ի ՀԱՐՑՈՒՄԸ

Մասիսի զուարթ Հարցումներէն Ը. րդին՝ Սիրոյ մեջ ի՞նչ է մեծագոյն յուսախաբարութիւնը ստացուած պատասխաններէն կը հրատարակենք հետեւեալ ամէնէն յաջողը, առանց ամբողջովին համամիտ ըլլալու անոր, թէ և ինքնին իմաստալից կերպով սրամիտ. —

Սիրոյ մէջ մեծագոյն յուսախաբարութիւնն է՝ էրիկ մարդու մը կամ կնոջ մը համար՝ կարծել թէ որ և է կերպով չպիտի յուսախաբ ըլլայ բանէ մը:

Գաթի-Գիւղ

ՄԻՔԱՅԷԼ ՏԵՒԼԿԵՐԵԱՆ

Որ կը ստանայ իմբագրութենէս գեղեցիկ դրամապանակ մը:

Թ. ՀԱՐՑՈՒՄ. — Տիկիներ ծեր ամուսիններ կը պծգայ ամեն կերպով: Ի՞նչ պէտք է ընէ, առանց մեղանջելու և առանց խիղճը տանջելու: Պատասխանները կարճ և սրամիտ պէտք է ըլլան: Կ'ընդունուին մինչև չորեքշաբթի իրիկուն: Յաջողագոյնին տէրը կը ստանայ 100 արցաքարդ իր անունով:

Ընթերցող մը հետեւեալ հարցումը կ'ընէ, պարգևի մը խոստումով.

ԲԱՌԱԽԱՆԴ. — Անձրե՛ տաճկ. տօգնող չընկրլ ըսել է. ի՞նչպէս կ'ըլլայ աս: Առաջին անգամ լուծողը պիտի ստանայ երեք ամիս Մասիս: Նամակները պէտք է ուղղել Մասիսի խմբագրատունը:

ՍԵՂԱՍԻՍ ԱՐԱՍԵԱՆ

«ՄԱՍԻՍ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Խ. ԷՓ. Փ. (Տորթ-Եօր). — Կը ցաւինք որ Մասիսի Աւարմը չենք կրնար ղրկել, որովհետեւ զայն կրնան ստանալ տարեկան բաժանորդա-

գինով բաժանորդներ, մինչ 40-ը 30 շրջ. միայն շրջած էք:

Շահույ (Կիրառում). — «Միաման»-ին գինն է 4 շրջ.: Դիմել Զարգարեան Գրատուն, Չաղմագճար:

Ս. էֆ. Բ. (Բիշիս). — Ձրի նմուշը Ալպոմին համար չէ(?) սիրելի բարեկամ, այլ թերթին:

«ՄԱՍԻՍ»-ի «ԱԼՊՕՄ»-Ը ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱԽՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ.
— Ինչպէս յայտարարած ենք թիւ 28 — 29-ով, եղած խնդրանքներու առաջադրեալն պատճառով, յապաղած է քիչ մը առաքումը «Ալպոմ»-ներու այն բաժանորդներուն, որոնք իրաւունք ունին զայն ստանալու, բացի որոնք պիտի ստանան անվրէպ: Մեր կամքէն անկախ այս յապաղումը ներողամտութեամբ կը դիտեն անշուշտ, քանի որ լուսանկարիչին կարելի չըլլար տառապէս՝ հասնիլ բոլոր խնդրանքներուն անմիջականօրէն:

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական. — Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 80 շրջ., գումարներու համար 108 շրջ. եւ օտար երկիրներու համար 35 ֆր.: Ձեռքէ վաճառում՝ քաւը ֆարա: Հանդէ՛ Դաւաթիա, Քամանտօ փողոց, ԱՐԵՒԵԼՔ հրապարակ Կ'եկլէ՛ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ եւ իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՛ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխներու շնորհիւ, զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԼՏԿԵԼ՝ԱԶԱՐԻ ԸԼԼԱԼԸ հանդամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր եւ երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեզանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւ այլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճօխ պէսպիսութիւն մը կը կազմեն:

Նշիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ գեղեցիկ աշխատութիւն մը եւ ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրաւաճառ Զարեհ էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գաբու, Բաքմ Բաշա իման) որուն կրնան գիմիլ Բառարանին՝ (գինը 15 շրջ. փօսթի ծախքով 16½) ինչպէս գրեցական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամիտ գրաւաճառի մը հետ գործ ունենալու վստահութեամբ. — Իր հրատարակութիւնն է նաեւ Դպրոցի Գիրքը դասագիրքերու շարքը, որ միակն է կանոնաւոր մէթոտով մը ընթացող՝ նախակրթական դասընթացքի շրջանին համաձայն:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքների, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հիւն և նոր դաղիական ակտերը: Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Ձորեքշաբթի օրերը միայն ձրի:

(8-10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Լնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ԿՅԱՆԱՊԱՆԱԿԱՆ ՍԻՆԿԵՐ	ԿԱՆԱԹԱՍ	1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.
	ԲԵՐԱ	2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիտէին դէմ,
	ՊՈԼԻՍ	1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
	ՍԿԻՏԱՆ	2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
ԿՅԱՆԱՊԱՆԱԿԱՆ ՍԻՆԿԵՐ		1. Սուլթան Համամ.
		2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.
		Չարչը Պօլու, Թ. 120.
		Դասերը եւ նորոգութիւնները ձրի.
		կատարեալ երաշխաւորութիւն:
		Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Լնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուրի տունը:

(9-10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւառներու համար տարեկան

60 դրշ :

Արտասահմանի

14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ,
միշտ ձրիաբար , Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Զհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎԲ ԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ»Ի Հասցէին

Գուրեմնիւ խան, քիւ 7, Կալարա, Կ. ՊՈԼԻՍ

درعيل غلط قورسوني فائره نومرو ۷ «ماسيس» غزتمسى اداره فائره

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata.
CONSTANTINOPLE

ՌՕՊԵՐԹ ԳՕԼԷՃ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականա-
կան ուսումը բաղձացուած կատարելութեամբ ուսանողնու համար : Վար-
ժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան , մարմնա-
մարզներուն և խզկերուն , ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առող-
ջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք
մը կառուցուած է նորոգապէս , իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն
տեսակ դործիքներ , վերջին դրութեանց համաձայն :

ԲԱՅՄԱՌԻԿ ԱՌԻԹ ՄԸ ԴՐԱՍԻՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵԱՆ ԴՐԱՏՈՒ-
ՆԷՆ. ՄԻԱՅՆ 20 ՂՐՈՒՇ ՓՈՆԱՆ 60 ՂՐՈՒՇԻ : — 1. Ասորա. վէպ. Բ.
Սիւլա. Թրգ. Թերղեան 10 : 2. Ագրիկն. վիպերգ. Բաղտասարեան 10 :
3. Առողջապահութիւն. Տքթ. Փէշտիմալեան 2 1/2 : 4. «Ներշնչումն» .
Տ. Սէթեան 5 : 5. Դիւրուսոյց Մեքոն Անգլ. Բերականոքեան. Ասա-
տուրեան 15 : 6-7. Ամուսնական Խնդիրներ : 2 հատոր 2 1/2 : 8. Սփո-
փանք Ռամկին. Մ. Յովհաննէսեան 5 : 9. Ուղեցոյց Դրագիտութեան
Թուրքիոյ Լեզուի. Դալպեան 5 : 10. Պիսնալոյցի. Լինհարտ Դեր-
տուդ 5 : Այս 10 կտոր վիպական , առողջապահական , գրական , լեզ-
ուաբանական , բանաստեղծական և մանկավարժական գրքերը՝ որոնք 60
դրոշ արժէք ունին , 20 դրոշի կը ծախուին Զարդարեան եղբայրներուն
Դրատունէն Բերա , Դուլէ-Դալու Թիւ 695 : Դաւառներու համար 7
դրոշ աւելի : Դրանէնք պէտք է փութան օգտուիլ այս առիթէն , դի-
մելով վերելի հասցէին , ուր կը ծախուին նաեւ ամէն տեսակ թուրքե-
րէն , հայերէն և ֆրանսերէն նոր թէ՛ դործածուած գիրքեր , աման և
գիւրամատչելի գիներով :